


ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՐԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԱՐԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրագրութիւն համար 80
Վեցամսեայ 50
Օտար երկիրներ հարեկան Գրաք 25
Վեցամսեայ 14
Թղթատարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեան ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

Զորքը շարժի օրը, 9 մարտ, բացարձակ պատճա-
ռով մը փառոս չի հրատարակուեցաւ որուն համար
մեր բաժանորդներուն ներողամտութիւնը կը խն-
դրենք:

ՎԵՐՋԻՆ ԿՈՉ ՄԸ

Տիրիւ շաբաթաթերթը իր վերջին թի-
ւով միտիտարական տեղեկութիւններ կը բերէ
մեզի՝ Ամերիկայի այլեւայլ քաղաքներու մէջ
հաստատուած հայերուն կողմէ որբախնամ
գործին ի նպաստ ցոյց տրուած հոգածութեան
մասին: Նիւ-Եօքըի հայ տիկիները ու օրիորդ-
ները ընկերութիւն մը կազմեր են մէջերին
ու անմիջապէս ստորագրութիւն բացած, նոյն
նպատակով ու նոյն եռանդով ընկերութիւն
մը կազմուել է նաեւ Բիւրօյիտէնի մէջ: Հան-
գանակիչ յանձնաժողովներ ալ Հօլիօք, Ըս-
թամփօրաւ և ուրիշ կողմեր: Իսկ ամենէն ա-
ւելի ուշագրաւ է Բօնքօրքի մէջ տեսնուած
փութիկոտութիւնը ու եռանդը: այդ քաղաքի
հայերուն թիւը կը հասնի 26ի, որոնց 3ը կին
ու 3ը աղջիկ: արդ, պիտի հաւատա՞ք որ
այսքան մանրակարգ գաղութ մը անգամ իր
մասնակցութեան բաժինը ունենալ մտածած
ըլլայ, եօթանասուն երեք տղար հաւաքելով
զոր Ազգ. Պատրիարքարան զրկեր են գաւա-
ռացի որբերուն հասցուելու համար:

Նոր աշխարհի հեռաւոր անկիւններէն հաս-
նող այս տեղեկութիւններուն չենք կրնար
պարզ արձագանգ մը տալ ու անցնիլ, ա-
ռանց պահ մը կանգ առնելու: Եթէ մենք
լռէինք «քարերը պիտի աղաղակէին» և Հա-
յաստանի որբերուն թշուառ ու կարօտ վի-
ճակը քարերն անգամ թունդ հանելու բնու-
թիւն ունի, գիտէք:

Հոս է ցաւային ու անըմբռնելի մանա-
ւանդ, որ այս գիտակցութիւնը, կարդաց-
ուածաղբխարչնկարագրութիւնները, գաւառ-
ներէն եկողներու կենդանի պատմութիւննե-
րը, պատրիարքական ու լրագրական հրա-
ւէյնները, չենք ըսեր անաղղեցիկ՝ բայց անհե-
տեանք մնացին Եգիպտոսի հայութեան հա-
մար: Ինչո՞ւ, ի՞նչպէս, ոչ որ կրնայ որոշ
պատասխան մը տալ: Խօսեցէ՛ք որ և է ե-
գիպտահայութիւն հետ այս նիւթին վրայ, ու պի-
տի տեսնէք որ անկեղծ վիշտ մը կը նկարուի
դէմքին վրայ: մինչեւ իսկ անհատներ կան
որոնք փափագ յայտնեցին իրենք իրենց
ծախքով որբեր որդեգրել: ուրիշներ՝ ընդ-

հանուր հանգանակութեան մը համամիտ էին:
ոմանք Աղեքսանդրիոյ մէջ որբանոց մը բա-
նալու գաղափարը պաշտպանեցին, և ոմանք
Կիպրոսի որբանոցը խրկել որոշեալ թուով
տղաքներ:

Խորհուրդները, ծրագիրները այնքան
չատցան որ ամենքն ալ «մեռեալ տառ» մը-
նացին, բացուած հանգանակութիւնը թուղ-
թի վրայ միայն գոյութիւն ունեցաւ և այն-
քան աղմուկով կազմուած յանձնաժողովը ա՛լ
կենդանութեան նշան չի տուաւ:

Եգրակացութիւն: Եգիպտոսեան երեք
հազար կամ աւելի թուով հայերը Ամերի-
կայի Բօնքօրք քաղաքի քանոնաց հայերուն
չափ ալ իրական ծառայութիւն մը չի կըր-
ցին մատուցանել որբերուն: այս վերջինները
ժողովեցին 73 տղար: առաջինները դեռ ո՛չ
իսկ մէկ միլիէմ:

Իրողութիւնը ինքնին այնքան պերճախօս
է — և տխուր կերպով պերճախօս — որ եր-
կար բարակ խորհրդածութիւններու պէտք
չենք տեսներ: Անգամ մը ևս պարտք կը սե-
պենք Եգիպտոսի ազգայիններուն սրտին ու
զգացման կողմէ ընել այս կենսական հարցի
վրայ: Տալու տրամադրութիւնը ու կարողու-
թիւնը չէ որ կը պակսի անոնց քով, այլ տա-
լու եղանակին վրայ համաձայնութիւն մը, հա-
մերայնութիւն մը: գործնական ու կտրուկ
նախաձեռնութիւն մը կրնայ դարմանել մինչեւ
հիմայ տեսնուած ցաւալի յապաղումը Յանձ-
նաժողով, առաջնորդարան, տեղապահ, տի-
կիներու մասնախումբ, մարմին մը կամ ան-
հատ մը վերջապէս պէտք է առաջ անցնին:

Որբերու պէտքն ու կարօտութիւնները
այնքան շատ են ու թախանձագին, որ հա-
կառակ ամեն կողմէ զրկուած նուէրներուն՝
Պատրիարքը չուարած կը մնայ այս մեծ աղէ-
տին առջեւ: Զե՞ք ուղեր դարման մըն ալ
դուք հասցունել այն օրհնեալ ու հարուստ
երկրէն որով կը պարծենաք ուրիշ առիթնե-
րու մէջ՝ «Փարաւոններու երկիր» ըսելով:

Բ Ա Յ Ն Ա Մ Ա Կ

ԱՌ ՕՐ, Ե. Մ. Վ. . .

Սիրելի Եգիպտացի,

Սիրագեղ գրութիւնդ, լսնաստեղծական հար-
ուածի մը գողտրիկ նոյնը՝ զոր խանդավառ կար-
դալու հաճոյքն ունիմ, լուսածիծաղ աստղ մ'էր
ոյր պայծառ նշոյններ թափանցեցին սրտիս խորերը,

հոգեւորով կենդանութիւն մը ներշնչելով ինձ ա-
նապատային տխուր կեանքիս մէջ: Երկնայի, երեք-
նեցի անոր ընթերցումը, և չէի կարող այլապէս
ընել, որմէ քաղած տպաւորութիւններս ու յու-
զումքս, մին բան դիման անարդի ու մեղամոլոտ,
կը յիշեցնեն ինձ վաղեմի բնական սիրոյ մը սրտ-
զան հօրն, ու կը փոխադրեն երեւակայութիւնս՝
ամբողջ ճերմակամորթներու՝ երանաւէտ բայց փո-
թորկայոյզ երկնքին տակ:

Կըսես թէ դու և պերճիմաստ ընկերուհիներդ
հետաքրքիր էք ինձմէ յոգուածներ կարգաւու Փա-
րոսի մէջ, Սուտանական կեանքէ: Հետաքրքրու-
թիւն մ'ահա, որ այնքան գովելի է ուսումնասէր
հայուհեաց կողմանէ՝ որքան փառաշահական ինձ հա-
մար, որուն իրաւամբ, ուսանաւորով իսկ, գոհացում
տալ պիտի սիրէի՝ եթէ Մուսայից երկնաթիռիչ, զոր
դու կը պաշտես, գիտտ անխորիւր, քաթէ՛, ինձ
ալ ժպտած ըլլար ծննդեանս անիծեալ օրը:

Բայց դու, օրիորդ, սր զարգացման ու մտա-
ւորական այնքան նախանձելի ձրբերով օժտեալ ես,
ու արտի և հոգւոյ մէջ մի գեղեցիկ յատկութիւն,
ներք առատաբէն կը կրես յանձնը, պարծանք մ'ես
ազգին՝ և, իբր սիրել մը գեղաշնորհ, խմտուու-
թեամբ կարտափայլիս ի դասս գեղանի ընկերուհի-
եացդ, է՛ր դի դու ալ լուս կառ: չես գրեր, չես
գործեր փայլուն ու փառվուն օրինակ մը հանգի-
սանալով, ինչպէս որ պարտքդ է, մեր հայ գեղե-
ցիկ սեռին: Ինչո՞ւ, նիւթին է որ կը պակսի բազմա-
բեզու գրչիդ, չեմ կարծեր: Զկարդայի՛ր Մէլինէն
առ Նինի գրուած նամակը: Ո՞վ աւելի քան զքեզ
կարող էր սպաստախանել Ռուտամէնի հրաւերին, և
է՛ր չես կարդար La Fronde-ը՝ փարիզեան տի-
պար գրագիտուհիներէն համարձակութիւն մը՝ հան-
րօգուտ ներշնչում մ'ունենալու համար: Փառս որ
պէտք էր խթան մ'եղած ըլլար մեզ ամենուս առ
հասարակ՝ Զանալ գեղեցիկ դպրութեանց հաշակը
ծաւալելու եգիպտոսեան հայ հասարակութեան մէջ:
Ե՛ր գտած ունի անզոր արծաթանդ մ'իսկ հայուհի-
եացդ կողմանէ: Ինչո՞ւ այս անտարբերութիւնը, ո՛ր
են մեր Գահիրէի արմաւենուհիները . . .

Ժամանակն է, կարծեմ, որ մեր հոյականոյշներն
ալ յուշիկ ստրջանան իրենց խոր թմրութենէն,
յաւէտ վար ձգելով իրենց նախաձայնիքէ փոխան-
ցուած այն դիմաքօղ քօղը՝ որով, անյիշատակ ժա-
մանակներէ հետէ, վարագործուած է արեւելցի Ե-
ւան, զի այդ անփառունակ սեւաթոյր քօղը, որ չը
գիտեմ ինչ մ'ունի խաւարաթափանց ու արեւել-
եան, ու գոգցես ամօթխածութեան ու պարկեշ-
տութեան emblème-ը ըլլալ կը նկրտի դեռ ի մեզ,
ուելի մթոյ ծխածանն է քան լուսոյ արտա-
փայլումը, աւելի յետադիմութիւն է քան յառաջդի-
մութիւն, աւելի միաս ունի քան օգուտ՝ հանուր
հայութեան:

* * *

Բարեկենդանի օրեր են, սիրելիս, օ՛հ, ինչքան
երջանիկ էք դուք բաղքիներդ: հապա պանդո՞ւխտը,
հապա անապատարնա՞կը . . . ա՛հ, մի բնաւ հարցը-
ներ այդ: Անի՛ միակ սփոփանք՝ գըլխուն վե-
րեւը ունի Աստուած, պատուանդանին ներքեւ՝
անդունդ, աջակողմը՝ անուպատ, անհունութիւն
անասման, անեղը: Ո՛վ պատրանք, ո՛վ անասելի,
անիմանալի անդանակութիւն: բնութիւնը ինք ալ,

իր բոլոր բանաստեղծականով, երկինքը, լուսինը, աստղերը, կապույտ ու դարձեր, որ պետք էր գուար- ճացնելին հէք պանդուխտը, հեգնոտ՝ կը ժպտին հոս անոր երեսին. ո՛հ, թռչունները իսկ որք այլուր մարդ- կանց սիրտը հեշտացնելու բնութիւնն ունին, հոս իրենց քաղցրալուր դեղձեղումները իրր յաւիտենա- կանութեան մահերգակ զօղանքը կը հնչեցնեն յա- րաժամ՝ անաստարակին խորագնդին ունին, որ ապշած՝ չուրջը կը նայի, ամէն բան տեսնել ու լսել կը թուի անոր, կը յուզի, կը սարսի, անհունին սար- սուռովը զօղահար: Ա՛հ, չարուի քեզ փոխարի- նել սիրել այս կեանքը քաղցի հաճոյալից կեանքին, ուր հիւսի՛ խաղ ու խնդիլ, թատր ու դիմակաւոր- ներ, հոյլ ի հոյլ և ձեռն ի ձեռն գողցես ի պար ա- ուսա՛լ կը տեսնեն անշուշտ le bon roi Carnaval: Ծաղկեմարտը միայն կարծես կը պակսէր ձեզ՝ Գահի- րէնակ հայերուդ հեշտութիւնը բազմապատկելու համար: Ի՞նչ կըսեմ, խաղ ու խնդում, հեշտանք ու ժպիտ հայո՛ւն համար են միթէ, հայը ո՞ր տունն ժպտած ունի, հայը արտասուքի, սուգի համար ծը- նած չէ՞ մի . . . :

Եթէ, սակայն, այս արտաքին տեսարաններէն կախորժիս, եթէ, հակառակ լուրջ բնաւորութեանդ վայրկենական հաճոյք մը զգալու անզգայութիւնն ունենաս անոնցմէ, այն տունն միայն յիշէ՛, սիրելի Եւթարիս, թէ՛ հեռուն՝ Ափրիկէի մէկ խորշը, շեղտի աւազուտ մի գետեղրին վրայ, տխուր ու մելամաղ- ձոտ կապրի երկաստորդ մ'ալ, իր զգայնութեամբը զժբաղդէ, որ կենաց մէն մի հաճոյքներէն արդէն զրկուած, բարեկենդանի ժպիտներու փոխան կուլայ այս պահուս իր բարեկամ Լեւոն Քէրէստէճեանի կան- խաճան մահուան վրայ:

Ափսո՛ս, ահա չահեկան անձնավորութիւն մ'ալ որ անհետացաւ ազգային կեանքէն:

Հանգիստ ոսկերացի, ողբացեալք Քէրէստէճեան:

Սուտան 23 փետրվար 2009 ԱՆԱՊԱՏԻ

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

Հաղասի Կ. Պոլսոյ գործակալութիւնը նախորդ շաբթուն եւրոպական քերթերուն ողորած է հետեւեալ հակիրճ հեռագիրը որ մեանոգութիւն պատճառելու բնութիւն ունի. «Կարևոյ, Վանայ, Բաղէշի եւ Մուշի գա- շառներուն մէջ շփոթութիւններ (conflicts) ծագած են հայերուն եւ քուրճերուն միջեւ: Մանրամասնութիւն կը պակսի»: Այդ քուա- կանէն յետոյ հասած սուրհանդակները ո՛ր եւ է նոր ծանօթութիւն չի քերթիս այս շուրհի մասին:

* * *

Մեծ տերութեանց Կ. Պոլսոյ դեսպա- ները վերսկսած են դիմումներ ընել Իրան մօտ ի նպաստ Անկիկ անուն մանկամարդ օրհորդին որ անցեալ տարւան օգոստոսին ձերբակալուած էր, ու անկից ի վեր բան- տարկուած կը մնայ, Բերայի հոյանսական դեսպանատան բակը նաւակ մը ձգած ըջ- շաղու անբասանութեամբ, հայ յեղափո- խական մասնախումբի մը կնիքով:

* * *

Հոռութեամբ կը հաղորդեն թէ Արեւելջի ֆրի- տոնեաներուն նպաստելու համար կազմուած իտալական մասնախումբի մէկ ուղեւորին ի պատասխան, Պապը յայտարարեւ է թէ ինք համալիս է ամեն տեսակ օգնութեան որ կը հասցուի հայերուն. «Մենք բան մը չի խը- նայեցիմք, յարեւ է Լեւոն ԺԳ, թէ՛ անխա- տրեան դէմ պաշտպանելու համար Տիար Ժողովուրդ մը եւ թէ խօսքով ու գործով ոգեւորելու համար ցայն, երբ վերջին ծա- ղայեղութեան մասնուած էր»:

* * *

Կաղթականներու վերադարձի խնդիրը կը շարունակէ զբաղեցունել միտքերը: Կ. Պոլսէն առնուած յուրերու նայելով, այդ վերադարձն արտօնող իրաւունք, որ հաղոր- դուած էր Պատրիարքարանին, դեռ միեւնեւ նախընթաց շաբթուն գործադրական հան- զանակ մը չէր առած: Օրինակեան Պատ- րիարքը Պայրամի շնորհաւորութեան համար նախարարներուն տուած այցելութեան առ- քիւ, երբ տեսակցեւ է նաեւ ռուսականու- քեան նախարարին հետ, այս վերջինը յայ- տարարեւ է, ինչպէս կը հրատարակեն Պոլսոյ ազգ. քերթերը.

«Կաղթականաց պատուաւոր մասին վե- րագարձն արտօնող հրամանը ստիպանութեան պաշտօնատան եւս հաղորդուած է և անոր գործադրման պարագաները պիտի ճշդուին Պայրամէն ետք»:

Այդ քուականէն ի վեր անցաւ 15 օր, եւ հաւանաբար այս իրիկուն հասնող Պոլ- սոյ սուրհանդակը քերթ աւելի որոշ ու ման- րամասն տեղեկութիւն մը:

ԱՆԵՔՍԱՆԴՐԵԱՆ ՔՐՕՆԻԿ

Ալեքսանդր մեծի հիմնած, Արապի փառայի կոր- ծանած և Շաբուր պէյի վերանորոգած բաղքին մէջ տասներկու օր անցուցի:

Ալեքսանդրեան ոտանաւոր մը յօրինելու համար տասներկու օրը բաւական է, բայց ալեքսանդրեան բրնձի մը գրեթե համար հաւատացէ՛ք որ տասներ- կու օր և տասներկու գլուխ բիշ է:

Ահագին նիւթ կայ հոն:

Եւ ըսել թէ այդ նիւթերը թաղապետական ընտրութիւնները չեն, ոչ ալ կառավարական նուա- ղորդները, ոչ Պօնտիկ և Թաննաւոզէի ներկայա- ցուցները, ոչ Օր. Մէնտիօրովի թէ՛նօր Բանտօրֆիլիի հետ նշանախօսութիւնը, ոչ ալ ուրիշ օրհորդի մը «անձնանուէր» առեւանգումը, տիկին այսինչի հա- րուած հրեայի մը հետ Զօրայական tête à tête-ները, նախանձոտ էրկներու գոհարի շարժումը քննել, ինք- րագրի մը երկտասնօրեայ անակնկալ այցելութիւնը և ոչ ալ . . . օգը, ծաղկախտը, Չուրի ընկերութիւնը, Բեհիմա Մարկիթիլի վերադարձը և ուրիշ այն ա- մեն խնդիրները որոնցմով կըրաղի տեղույն եւրո- պական գաղթականութիւնը:

Պոլսէն Բարերը, Թիֆլիզէն Լօրէն, Գահիրէէն Մանչէսթըր և Վաշինգթըն Ալեքսանդրիս, հայերուն համար քաղականութիւն մը կայ որուն համար զիրար կը բզկտեն, զիրար կը ծեծեն, կը հայդեն, կը պա- ռան, ընկերութիւններ և կուսակցութիւններ կը կազ- մեն, լրագրի յօդուած կուտան. թաղականութեան համար կը կարգուին, կը սիրարանեն, երեկոյթներ կը կազմակերպեն, թաղականութեան համար կը մեռնին, առանց մոռնալու այն թաղականները որ անով . . . կապրին:

Ալեքսանդրիս ընդհանրապէս այս պահուս ծաղ- կախտով կը տառապի. իսկ հայերը ի մասնաւոր թաղականախտով:

Տուներու մէջ, բաղնիքը, եկեղեցին, մայրին վը- րայ, ցուցադրութիւնը առջեւ, սէտիլին անկիւնը, գրասենեակներու, սրճարաններու և նոյն իսկ պան- քաներուն մէջ՝ այդ է օրուան խօսակցութեան նիւ- թը: Պնդոզներ կան թէ Հիմէնի առաջատարը ճաղորդութեանց մէջ անգամ Ալեքսանդրիլիայի ամուլ- ները վայրկեան մըն ալ թաղականի վրայ կը խօսին երկու գլուանի միջեւ և մէկ բարձի վրայ:

* * *

Ալեքսանդրեան ազադու, դիւրաբեկ և յա- խուռն կերպով կազմութիւնը, և անոր կրկին ա- տենապետներուն հրաժարումը, գաղթականներուն սպորմիլ և սպորմութեան արժանի վիճակը, թա- ղականներուն կամ աւելի ճիշդը թաղականին ան-

գլուխ և ան . . . —Երես ինչու կը նայիք— ան- հասկնալի ընթացքը, սրունքներու կամ թեւերու վրայ եղած պատուաստները, Փարոսի չորեքշաբթի օր չի հրատարակուիլ ամենէն շատ կըրաղեցնեն սակայն մտքերը Ալեքսանդրիլիայի հայերուն:

Այս ամենն ալ, իրաւ, իրենց շահեկանութիւ- նը ունին և բրնձիկի մը մէջ չէ որ անոնց կրնանք ընծայել այն կարեւորութիւնը որուն իրաւունք ունին: Որքան որ այդ նիւթերը յաջորդաբար պիտի զրաղե- ցնեն զմեզ, սակայն առ այժմ սա կրնանք ըսել թէ ազոնք աւելի բարեկենդանի մէջ գրուելիք բաներ են քան թէ Մեծ պահքի ուր նոյն իսկ գրելու մէջ ծով- կալութեան խնդիր կայ:

Յ. Ա.

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Հիմա որ Ռուսիա, Մեղլիա ու Ֆրանսա երաշխաւորեցին Յունաստանի կնքելիք փոխա- ութութիւնը՝ պատերազմական տուգանքին հա- տուցման համար, թուրքիոյ ուրիշ բան չի մը- նար ընել բաց եթէ իր զօրքերը հեռացնել թեսալիանէ, ինչպէս կը տրամադրէ հաշտու- թեան դաշնագրին ճրգ. յօդուածը: Եւ սա- կայն Դուռը չուզեր գործադրել իր այս յանձ- նաւութիւնը, նոր առարկութիւն մը մէջանդ նետելով՝ թէ Կրէտէի խնդրին վերջնական կարգադրութեանէն ետքը միայն կրնայ թողուլ թեսալիան, վասնզի, կըսէ, Կրէտէի ու թե- սալիոյ խնդիրները առնչութիւն ունին իրա- լու. հետ:

Մեծ տէրութիւնները տրամադիր չեն ականջ կախելու Դրան այս նոր առարկութեան ու միաբանած կերեւելն պահանջելու որ թըր- քական բանակը հեռացուի թեսալիանէ, ա- ռանց սպասելու կրէտական խնդրին լուծման: Արդէն իսկ Ռուսիա, Ֆրանսա և Իտալիա այս իմաստով պատասխանած են Դրան վերջին չլիարեւականին, և կը կարծուի թէ Գեր- մանիա, Մեղլիա ու Աւստրիա ալ նոյն սկզբուն- քը պիտի պաշտպանեն:

—Ռուսական զրահաւորներուն Տարտա- նէլէն ազատութեն անցնելու խնդիրը բանակ- ցութեան առարկայ է միշտ ի Կ. Պոլիս Դաշ- նագրերու զօրութեամբ, Ռուսիա իրաւունք չունի Տարտանէլէն անցունել իր մարտանա- ւերը, զանոնք Սեւ ծով մտցունելու համար. սակայն նախատեսուած չէր այն պարագան, թէ երբ նոյն իսկ Սեւ ծովու նաւարաններուն մէջ մարտանաւեր չինէ Ռուսիա, զանոնք դուրս հանելու համար Տարտանէլի մուտքը ազատ պիտի գտնէ՞ իր առջեւ, ինչպէս կը պահան- յէ հիմակ, Ծայրագոյն Արեւելք խրկելու հա- մար իր մարտանաւերը. և ասոր վրայ է ահա որ չեն կրնար համաձայնիլ: Դուռը չուզեր բնականաբար նեղույններէն անցունել ալ պատերազմական նաւախումբ մը որ կրնայ սպառնալիք մը դա վտանգ մը գաղտնալ իրեն համար: Հաւանաբար, անոնց մէկիկ մէկիկ ու հեռաւոր անջրպետներով անցնելուն մի- այն հաւանի վերջ ի վերջոյ: Ասով հան- դերձ, անցեալ շաբթու ուսական զրա- հաւոր մը անցեր է Տարտանէլէն: Այս պա- րագան ու այս վէճերը ծնունդ տուած ըլլա- լու են գերմանական թերթերու մէջ արձա- գանդ գտած տարօրինակ լուրերու, իբր թէ Ռուսիա տեսակ մը ոտնձգութիւն ընելու վրայ է Կ. Պոլսոյ դէմ:

—Պուրկար կառավարութիւնը վերստին

հրահանգ տուեր է Կ. Պոլսոյ իր գործակա-
տարին՝ Պ. Մարքոֆի, Իրան ուղարկութիւնը
հրաւիրել Մակեդոնիոյ հիւսիսային գաւառ-
ներու մէջ քրիստոնեաներու ջարդերուն ու
կեղծքուններուն վրայ որոնք դադարած չեն,
հակառակ քննիչ յանձնաժողովի մը առաջման
ու բաղմամբ զօրքերու համախմբման։ Սո-
ֆիայէն Թաւրիս ուղղուած հեռագրի մը նա-
յելով, պատերազմական նախարար Իվանով
գնդապետը քանիցս ի ժողով գումարեր է
պուրկարական սպայակոյտի անդամները։ Այդ
գումարումներուն մէջ որոշուեր է, կրօնի, հի-
մակուց պատրաստուիլ պատերազմի պատա-
հականութեան մը որ առաջիկայ գարնան
կրնայ ծագիլ Թուրքիոյ և Պուրկարիոյ միջեւ։

—Սերպիոյ նախկին Միլան թագաւորը
որ սերպիական բանակին ընդհանուր հրամա-
նատար կարգուած է, վերջերս Իմթիազի ու-
կի շքադրամն ընդունեց Սուլթանէն։ Պէրլ-
րատի մէջ ընդհանուր կերպով սա մեկնու-
թիւնը կուտան եղբի Սուլթանին կողմէ ցու-
ցուած այս բարեկամութեան, թէ կը փա-
փագի Սերպիոյ աշակցութիւնն ապահովել,
եթէ Մակեդոնիոյ դէպքերուն առթիւ Թուր-
քիա կուրի բռնուի Պուրկարիոյ հետ։ Միլան
թագաւորը կը պատրաստուի քննական պը-
տոյս մը կատարել երկրին զանազան կողմե-
րը, աչքէ անցունելու համար թուրքներու պի-
կան սահմանադրութիւնն զինուորական վիճակն
ու ամբողջութիւնները։

—Պոլսոյ գրաքննութիւնը խստիւ արգի-
ւեր է թերթերուն՝ Յունաստանի թագաւորին
վրայ եղած սպաննութեան փորձին որ և է
ակնարկութիւն չընել։ Մինչեւ իսկ, կըսէ Ռիւ-
դէրի թղթակիցը, Բերայի հեղինական դես-
պանաւան մատրան մէջ կատարուած գոհա-
բանական մաղթանքին յիշատակութիւնը չէ
եղեր լրագրաց մէջ։

—Կ. Պոլսէն մարտ 3 թուականով կը
հեռագրեն եւրոպական թերթերուն. «Հիւ-
սէյինգաւտէ և Հալիսիզաւտէ ընտանիքնե-
րը որոնք երուսաղէմ կը ընակին ուր մեծ
յարգ կը վայելեն, տեղական իշխանութեանց
կողմէ ձերբակալուելով Պէրութ տարուեր են
և անկից ո՛ր խրկուելին յայտնի չէ։ Թուրք
շրջանակներու մէջ մեծ գրգռում կը տիրէ,
վասնզի այս զահերը Մարգարէի շառաւիղնե-
րէն կը նկատուին և անոնց ընտանիք երկար
դուրեւէ ի վեր հաստատուած են ի Սուրիա։
Այս առեւանգման պատճառ կը նկատուի Ե-
րուսաղէմի նոր կառավարիչ Թէվֆիզ պէյի
կողմէ պահանջուած գումարի մը մերժումը»։

—Անցեալ շաբթու Կէլիպօլուի մէջ (Տար-
տանէլի մօտ) խռովութիւններ ծագեր են,
հացի գնոյն սղութեան պատճառաւ։ Յուցա-
րարները, որոնք ամենքն ալ թուրք են, փոր-
ձեր են կառավարչին ապարանքը կրակի տալ։
Երեսուներկու հոգի ձերբակալուեր են։

ԱՂԵՏԱԲԵՐ ԿՏԱԿԸ

Հաճի Հաննա Ասիա, ծերուկ Հալէպցին,
երբ մահուան անկողին վրայ իր կտակին վեր-
ջին տրամադրութիւնները կը կարդադրէր, ե-
կեղեցիի, աղքատի ու իր ժառանգորդներուն
արդար բաժիններ հանելով հարստութենէն,
միտքէն կրնա՞ր անցունել թէ նոյն իսկ այդ
կտակը պատճառ պիտի ըլլար իր հոգեզաւ-

կին ու կտակակատարին անձնասպանութեան։

Պ. Մատուր Տէր-Մարտիրոսեան, որ ան-
գամ մը արդէն փորձած էր վերջ տալ իր
կեանքին՝ Նեղոս գետը նետուելով, ուսկից
ազատուեցաւ նաւավարներու ձեռքով, ան-
յեալ շաբթու գործադրեց իր եղբրական խոր-
հուրդը, տանը պատշգամէն փողոց նետելով
ինքզինքը։ Մահը վայրկենական եղաւ։ Խեղճ
մարդը կը թողու այրի մը ու զաւկներ։

Իր անձնասպանութեան շարժառիթը
մութ կը մնայ տակաւին։

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Բազուի ազգայինները շատ փառաւոր ու
համակիր ընդունելութիւն մը ըրեր են Վե-
հաիաւ Կաթողիկոսին։ Փետրուար 9/21ին,
Ն. Ս. Օծովիւն Բալխան առաջնորդուելով,
գլխուր է նաւթային արդիւնաբերութեան հե-
տաքրքրական կողմերը։ Այնտեղ տրուած սե-
ղանին վրայ, ալեզարդ Հայրապետը ի միջի
այլոց բաժակ պարպեր է բանտրներու կենաց,
ըսելով՝ հարուստները բանտրանց են պար-
տական։ Այս բաժակաճառ ընդունուեր է մեծ
խանդավառութեամբ և հացկերայթիւն ներկայ
հայ գործարանատէրերը խոստացեր են բար-
ւոքել բանտրներուն վիճակը։

Յետոյ, Հայրիկի ներկայութենէն ոգե-
ւորուած, հետեւեալ նուիրատուութիւններն
յանձն առեր են ինքնաբերաբար. Ա. Մատուր-
եան իր նաւթահորերու մէկ շաբաթուան հա-
սոյթը կը թողու էջմիածնի ու երուսաղէմի
վանքերուն։ Մանթաշեան այդ միւսնոյն օրը
արտադրութիւնը ամբողջ նաւթին (100,000
բուս) արժէքը՝ նոյն յօժարակամութիւնը յայտ-
ներ են նաեւ «Արարատ» ընկերութեան ներ-
կայացուցիչ Ամիրեանց և ուրիշ նաւթարդիւ-
նաբերողներ։ Ծարտարագէտ Աղամեանց ա-
ռաջարկեր է՝ ի յիշատակ Ս. Կաթողիկոսի այ-
ցելութեան՝ Բազուի մէջ ընթերցարան մը հիմ-
նել բանտրներու համար։

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Բարձր. Խտիվը հինգշաբթի իրիկուն վե-
րադարձաւ Էլ-Արիշէն ուր զբօսական պտոյս
մը ընելու գացած էր։ Ն. Բարձրութիւն երէկ
Գուպէ անցուց և այս առաւօտ Ապտինի
պալատը եկաւ նախարարաց խորհուրդին
նախագահելու։

Այդ նիստին մէջ նկատողութեան պիտի
առնուէր Հիճազի ուխտագնացութիւնը արգի-
ւելու խնդիրը զոր առաջարկած է առողջա-
պահական վարչութիւնը, Հիդկաստանի ժան-
տախտին պատճառաւ։ Հաւանական կը նը-
կատուի որ բացարձակ կերպիւ չի պիտի ար-
գիւրի այդ ուխտագնացութիւնը, այլ կարգ
մը խիստ պայմաններու պիտի ենթարկուի,
որպէսզի եգիպտոսի հանրային առողջութիւնը
չի վնասուի այդ պատճառաւ։

—Հինգշաբթի օրը, արտաքին գործոց
պաշտօնատան մէջ տեղի ունենալիք հիւպա-
տոսական գումարումը, որուն նպատակն է
խառն գատարաններու կազմակերպութեան
փոփոխման առաջարկը, յետաձգուեցաւ, որով
հետեւ բոլոր տէրութեանց ներկայացուցիչ-
ները չէին եկած։

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

1898 փետրուար 23 թուականաւ Գահիրէի խառն
դատարաններու արձանագրութեանց դիւանին կողմէ
օրինապէս վաւերացեալ պայմանագրութեամբ (sub.
N° 1244-1248)։

Ա. Տիար Յակոբ Կիւսիւկեան, վաճառական, հաս-
տատեալ յ'Աշքըսանդրիա։

Բ. Տիար Տիգրան Չաւիթեան, վաճառական, հաս-
տատեալ ի Գահիրէ։

Դ. Տիար Արմենակ Պէլլեւեան, վաճառական,
հաստատեալ ի Գահիրէ։

Դ. Շահակից ընկեր մը (commanditaire)։

Վերոյիշեալները հաւաքարար կազմած են ընկե-
րութիւն մը որ պիտի զբաղի ամեն տեսակ ծխա-
խոտի և սիկարէթներու մեծարանակ ու փոքրաքո-
նակ առեւտուրով և շահագործմամբ։

Այս ընկերութիւն հիմնուած է պարզ յանձնա-
րարիկ եղանակաւ (société en commandite simple)։
Բայց Տեարք Բ. Կիւսիւկեան, Տ. Չաւիթեան և
Ա. Պէլլեւեանի համար ընկերութիւնը հաւաքական
անուան տակ կը մնայ (en nom collectif)։ Ընկե-
րութիւնը չորս տարի շարունակ պիտի տեսէ, սկըս-
եալ 1898 փետրուար 1է մինչեւ 1902 մարտ 1։

Ընկերութեան կեդրոնատեղին է Գահիրէ նախ-
կին Չաւիթի փողոց, վաճառատեղի Ա. Սաֆուեան
եւ ընկ. որուն կը յաջորդէ ընկերութիւնս։

Ընկերութեան անունն է։

Ա. ՍԱՆՈՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Յաջորդք

ՉԱՄՔԵՐԹԵՆ, ՊԵՅԼԵՐԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Միւսնոյն անունը ընկերութեան ստորագրու-
թիւնն ալ է զոր պիտի գործածեն Գահիրէի կեդրո-
նատեղին գտնուող համեմալ ընկերները։

Վասն վաւերականութեան՝

Գահիրէ, 8 մարտ. 1898

Յակոբ Կիւսիւկեան
Ա. Ե. Պէլլեւեան
Տ. Չաւիթեան

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՐԼԻՆ, 12 մարտ. — «Թափեպաթ» կը ծանու-
ցանէ թէ բոլոր մեծ Տէրութիւնները հաւանած են
Եօրկիոս իշխանին Կրէտէի կառավարիչ անուանուե-
լուն։ Ֆրանսա, Ռուսիա և Անգլիա պիտի օգնեն
իշխանին՝ կզղին խաղաղեցնելու գործին մէջ։

ԼՈՆՏՈՆ, 12 մարտ. — Թագուհին Շէրպուր
գնաց։

Լորտ Սոլզպերի հիւանդ է միշտ։ Չատիկէն
առաջ չի պիտի կրնայ Ռիվիէրա երթալ օդավո-
խութեան։

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

ՀՈՒՍԷ ՉԱՄԱՐ ՊԱՆՈՍ ՍԵ

Մեծահարուստ Ամերիկացի Ռեյնէլ Բի-
պօտի որ Վենեսուէլի մէջ հոյակապ պալատ
մը գնած էր, պատմական յիշատակներով լե-
ցուն այդ շէնքը Զօլաի տրամադրութեան
ներքեւ գնել ուզեց վերջերս։ Այս իշխանա-
կան հիւրընկալութիւնը առաջարկուած միջո-
ցին, Բարիզի եղեռնագատ ատեանը տակա-
ւին իր վճիռը չէր տուած, և Բիպօտի՝ յու-
սալով որ ֆրանսացի գրագէտը անպարտ պի-
տի արձակուի՝ հրաւիրած էր զայն երթալ
ատեն մը այդ պալատը ընակիլ, իր կրած
յոգնութիւններէն և յուզմունքներէն հանգս-
տանալու համար։ Երգուեալ գատաւորները
կամ քաղաքականութիւնը այլապէս անօրի-
նեցին, պալատին տեղ բանտ խրկելով Ռո-
կօն-Մաֆաւներու հեղինակը։

ՌՕՁԻԼՏԻ ՍՊԱՌՆԱԼԻԲԸ

Պէրլինի թերթ մը կիմանայ Բարիզէ թէ
Պառն Ալֆօնս ար Ռօշիլտ յայտարարեր է
նախարարապետ Պ. Մէլլինի թէ մտադիր է՝
ամբողջ ընտանիքով ու ազգականներով մեկ-
նիլ Ֆրանսայէն, եթէ արդի հակահրէական

պայքարը շարունակուի: Եթէ այս սպառնալիք գործադրուի, կըսէ գերման թերթին թղթակիցը, ծանր հետեւանքներ կրնայ ունենալ ֆրանսական կառավարութեան համար որ ելմտական մեծամեծ գործառնութիւններ ու յանձնառութիւններ ունի Ռոչիլտի հետ:

ՄԵՆԱՄԱՐՏՆԵՐ

Անցեալ կիրակի, իտալացի ծանօթ երեսփոխան Պ. Բալալօթի՝ Յաղէթա Տի Վեմէնիա թերթին տնօրէն ու երեսփոխան Պ. Մաքօլարի հետ մենամարտելով լրագրական վէճի մը պատճառաւ, թուրի հարուածով մը սպաննուեցաւ: Բալալօթի մահը խորին յուզում պատճառեց ամբողջ երկրին մէջ: Խորհրդարանը իր նիստը փակեց ի նշան սգոյ: Երկու հարիւր ֆրանսացի երեսփոխաններ հեռագրաւ յաւ յայտնեցին հանգուցեալի ընտանիքին:

Նոյն օրը, Բարիզի մէջ մենամարտեցան գնդապետ Բիքաու և գնդապետ Հանրի: Այս վերջինը թեթեւ մը վիրաւորուեցաւ բազուկէն: Մենամարտին պատճառն է Զօլարի դատին մէջ գնդապետ Հանրիի կողմէ տրուած վկայութիւն մը որ սուտ կը հանէր Բիքաուի մէկ յայտարարութիւնը:

ԿԻՆԵՐՈՒ ՑԱՐԻՔԸ

Թէեւ հազուադիւր չեն էրիկմարդեր ուրոք իրենց տարիքը ծածկելուն մէջ մասնաւոր հաճոյք մը կը զգան, բայց այս տկարութիւն աւելի ընդհանուր է գեղեցիկ սեռին համար: Նիւեօրքի հպատակութեանց դիւանի պաշտօնեան վերջերս բաւական դժուարին կացութեան մը մէջ գտնուեցաւ կնոջ մը հանդէպ որ եկած էր ամերիկեան հպատակութիւնն ընդունելու:

Վայելչապէս հագուած ու քառսուն տարեկանի մօտ այդ օտարուհին իր անունը, մականունը յայտնելէ ետք, կատաղի բարկութեան մը մատնուեցաւ, երբ պաշտօնեան հարցուց իրեն թէ «քանի՞ տարեկան էք, տիկին»:

—Ի՞նչ, ինծի պէս յարգելի կնոջ մը տարիքը հարցունել կը համարձակիս, լի՛րբ չի պիտի ըսեմ:

Ի զուր պաշտօնեան բարեկիրթ ոճով մը սկսաւ համոզել տիկինը թէ այս ձեւակերպութիւն անհրաժեշտ էր՝ հպատակութեան վկայականը յանձնուելու համար: Կինը կը յամառէր իր մերժման մէջ: Ճարահատած՝ դուրս ելաւ գրասենեակէն, քանի մը բարեկամներ գտնելու որպէս զի իր կրած «անարգանքին» վրէժը գային լուծել պաշտօնեան: Նորանցքին մէջ ոստիկանի մը հանդիպեցաւ որուն պատմեց գործը:

—Ի՞նչ պատճառ ունիք տարիքնիդ ծածկելու, հարցուց մարդը պաղարկելով:

—Տանընթեք տարեկան հասակէս ի վեր Ամերիկայ կը գտնուիմ, պատասխանեց կինը, միշտ նոյն զայրացած շէշտով, ո՛չ մէկ մարդկային արարածի չեմ յայտնած տարիքս ու չի պիտի յայտնեմ ընաւ:

Եւ արդարեւ, նախամեծար սեպեց ամերիկեան հպատակութեան զրկուիլ քան թէ մեղանշել իր կնոջական արժանապատուութեանը դէմ:

ՍԱՓՐԻԶ
ՕՇԱՆՆԷՍ ՊԷՅԼԵՐԵԱՆ

Բերայի ճարտար սափրիչներէն Օհաննէս Պէյլէրեան որ մէկ ու կէս տարիէ ի վեր Գահիրէ հաստատուած է և մեծապէս գոհ թողուցած իր յաճախողները, այս անգամ իր նոր խանութին մէջ (Աթապա էլ Խատրա, թրամուէյի կայարանին դէմ) ամեն դիւրութիւն ու հանգստաւէտութիւն կընծայէ մաքրութիւն, արագութիւն ու վայելչութիւն՝ թէ ածիլման և թէ վարսայարգարութեան մասին:

ՖՕԹՕԿՐԱՖԻ ԷԺԻԲՍԻԷՆ

Ք. ՊԻԻՔՄԷՃԵԱՆ

ՇԱԱ ՄՈՒՀԱՄԵՏ-ԱԼԻ ԹԻԻ 120

Արհեստին վերջին կատարելագործութեան համեմատ հաստատուած այս լուսանկարչատան մէջ ամեն տեսակ լուսանկարներ կը հանուին գոհացուցիչ գիներով: Ամեն մեծութեան ԱԿՐԱՆՏԻՍԸՄԱՆՆԵՐԻ 10 — 10

PHARMACIE DE LA POSTE
ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱԽԱԳԵԱՆ

ԳԱՀԻՐԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՏԱԹԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախողները պիտի գտնեն եւրոպական լուսագոյն գործարաններէն բերուած թարմ դեղեր, չափաւոր գիներով: Դեղագիրները ամենայն խնամօք և ուշադրութեամբ կը պատրաստուին: Անգլիական և ֆրանսական սբէսիպիքներ: Թարմ հանգալիք ջուրեր, անուշահոտութիւնք եւն. քնալուծական և մանրադիտական քննութիւնք: Դեղարանս կը յաճախեն հայ և օտարազգի ծանօթ բժիշկներ: Բժշկական ձրի խորհրդածութիւնք աղքատաց համար: 32—50

ԼՈՒԱՑԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻԶ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՒԷԹԻ, ՇՐԱՆՏ ԱԶԱՏԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

Կը ԼՈՒԱՑ ամեն տեսակ ճերմակեղէններ ու հագուստներ. ԿԱՐԴԻԷ արանց և կանանց շապիկներ, շրջագդեստներ, ևն. մաքրութիւն, ճշգրտահոլութիւն, և խիստ չափաւոր գին: 3.—24

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵԻԵՆԻԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԳՐԻՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		Խառն		Օմնիպ.		Կէս ուղ.		Օմնիպ.		Էքսորէս		Օմնիպ.		Էքսորէս		Օմնիպիւս	
		1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1, 2 կգ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1, 2 կգ.	առտ.	1 2 3 կարգ	կարգ
Գահիրէ	մեկ.	4 45	—	7 30	—	8 15	—	9 30	—	3 30	—	4 45	—	7 15	—	11 —	—
Պէնհա	»	8 —	—	7 49	—	9 32	—	10 15	—	4 47	—	5 29	—	8 32	—	12 35	առտ.
Թանթա	ժամ.	11 28	—	8 30	—	10 30	—	10 55	—	5 45	—	6 7	—	9 30	—	1 44	—
	մեկ.	11 48	6 —	8 34	—	11 15	—	11 —	—	6 26	—	6 11	—	—	—	1 54	—
Տամանհուր	»	երեկոյ	—	7 34	—	9 41	—	12 49	—	11 58	—	7 59	—	7 7	—	3 51	—
Ալեքսանդրիա	ժամ.	6 25	—	9 15	—	10 45	—	2 30	—	1 —	—	9 40	—	8 7	—	5 50	—

ԱՂԵՔՍԱՆԳՐԻՈՅԻ ԳԱՀԻՐԷԻ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		Խառն		Օմնիպ.		Կէս ուղ.		Օմնիպ.		Էքսորէս		Խառն		Օմնիպ.		Էքսորէս		Օմնիպիւս	
		1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1 2 կգ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1 2 կգ.	առտ.	1 2 3 կարգ	կարգ
Ալեքսանդրիա	մեկ.	—	—	7 —	—	7 15	—	9 —	—	9 20	—	2 30	—	4 15	—	6 15	—	11 —	—
Տամանհուր	»	—	—	8 6	—	8 58	—	10 2	—	12 14	—	4 13	—	5 15	—	8 6	—	1 9	առտ.
Թանթա	ժամ.	—	—	9 12	—	10 28	—	11 —	—	2 39	—	5 43	—	6 10	—	9 40	—	2 56	—
	մեկ.	6 15	—	9 16	—	11 20	—	11 5	—	2 49	—	6 30	—	6 14	—	—	—	3 6	—
Պէնհա	մեկ.	7 18	—	9 59	—	12 23	—	11 46	—	4 43	—	7 33	—	6 52	—	—	—	4 25	—
Գահիրէ	ժամ.	8 30	—	10 45	—	1 35	—	12 30	—	6 25	—	8 45	—	7 35	—	—	—	5 50	—

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷԶ

ՊԷՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՒՈՏ		ԵՐԵԿՈՅ		ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՒՈՏ		ԵՐԵԿՈՅ	
Գահիրէ	մեկ.	11 40	—	7 —	—	Սիւէզ (քարափ)	մեկ.	9 50	—	—	—
Պէնհա	ժամ.	երեկոյ	—	7 48	—	» կայարան	»	—	—	3 30	—
	մեկ.	12 28	—	7 53	—	Խամաիլիա	»	երեկոյ	—	7 5	—
Զակաղիկ	ժամ.	1 34	—	8 54	—	»	»	1 20	—	—	—
	մեկ.	1 44	—	9 4	—	Զակաղիկ	»	ժամ.	3 7	8 53	—
Խամաիլիա	մեկ.	3 40	—	1 —	—	»	մեկ.	3 17	—	9 3	—
Սիւէզ կայարան	ժամ.	—	—	5 —	—	Պէնհա	»	ժամ.	4 13	9 47	—
Տօք (քարափ)	ժամ.	6 55	—	—	—	»	մեկ.	4 17	—	9 4	—
						Գահիրէ	ժամ.	5 5	—	10 35	—